

ապուշի կյանքը  
գաճաճի ասույթներից  
Էստեներ, մանրապատումներ  
գորտը  
կիճը  
դաշնամուրը  
տարեվերջյան մի օր  
երկխոսություն մթության մեջ

- Այս ուղեղը պատկանում է N էլեկտրական ընկերության մի ճարտարագետի: Նա կարծում էր, որ ինքը մի մեծ, սև, փայլփլուն դինամո - մեքենա է:

Խուսափելով բժշկի հայացքից՝ նա պատուհանից դուրս նայեց: Այնտեղ ոչինչ չէր երևում, բացի աղյուսե ցանկապատից, որի վրա կոտրված շշերի ապակյա կտորներ էին: Եվ դրանք էլ սպիտակավուն հետքեր էին թողնում տեղ-տեղ հայտնված մամուռի վրա:

### ԸՆՏԱՆԻՔԸ

Նա ապրում էր արվարձանում, ձեղնահարկով մի տանը: Արդեն քայքայվող գրունտի պատճառով վերնահարկը տարօրինակ կերպով թեքվել էր:

Այդ տանը մորաքույրը հաճախ էր վիճում նրա հետ: Հաճախ այնպես էր պատահում, որ նրանց հաշտեցնում էին իրեն որդեգրած ծնողները: Բայց, միևնույն է, ամենաշատը նա մորաքրոջն էր սիրում: Երբ լրանում էր նրա տասներկու տարին, մորաքույրն արդեն վացունամյա ծեր կին էր:

Շատ անգամներ, նստած արվարձանի այս տան վերնահարկում, նա մտածում էր՝ արդյոք մի՞շտ է այդպես, որ երբ մարդիկ իրար սիրում են, տանջում են միմյանց: Եվ այդ ամբողջ ժամանակ նրան մի տհաճ զգացում էր հետապնդում. կարծես վերնահարկն ավելի ու ավելի էր թեքվում:

րով նկարի տակ, կարևոր ծանոթանալի միջից կառու-  
չուկի ծառի փարթամ տերևներն էին կախված:

## ՀԻՎԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ծովից անդադար փչող քամու ներքո՝ *սա* բացեց  
անգլերեն բառարանը և մատով սկսեց անցնել բառե-  
րի վրայով.

talaria – թևավոր կոշիկներ, սանդալներ

tale – հեքիաթ

talipot – արմավենի, որ աճում է Հնդկաստանի  
արևելքում: Բունն ունի հիսունից հարյուր ոտնաչափ  
բարձրություն, տերևներից պատրաստում են հովա-  
նոցներ, հովհարներ, գլխարկներ: Ծաղկում է յոթա-  
նասուն տարին մեկ...

Երևակայության մեջ արթնացավ այդ արմավենու  
ծաղկի պայծառ պատկերը: Այդ պահին *սա* կոկոր-  
դում քոր զգաց և, անկախ իրենից, բերանից մի կաթիլ  
թուք ընկավ բառարանի վրա:

Թո՛ք, բայց դա թուք չէր:

Նա մտածեց կյանքի անցողիկության մասին և մեկ  
անգամ ևս պատկերացրեց, որ ինքն այդ արմավենու  
ծաղիկն է՝ հպարտ կախված ծովից անդին:

## ՆԿԱՐԸ

*Նա* հանկարծ... և իսկապես դա միանգամայն ան-  
սպասելի էր... *Նա* կանգնած էր մի մեծ գրախանու-  
թի ցուցափեղկի առջև, նայում էր Վան-Գոգի նկար-

Շատ անգամ իր անվերջ սիրտը բացահայտում էր իր զգացմունքները, որոնք հաճախ ծնունդ էին առնում նրա համար: Դրանք էին իր սիրտը, որը հաճախ ծնունդ էր առնում նրա համար: Դրանք էին իր սիրտը, որը հաճախ ծնունդ էր առնում նրա համար: Դրանք էին իր սիրտը, որը հաճախ ծնունդ էր առնում նրա համար:

Լարերի մեջ դեռ բոցկլտում էին պայծառ կայծերը: Կյանքում չկար մի բան, որ *նա* հատուկ ցանկանար: Եվ միայն այս մանուշակագույն կայծն էր, այս սարսափելի կայծը՝ օդի մեջ, որ *նա* ցանկանում էր բռնել, թեկուզ կյանքի գնով:

## ԴԻՆ

Յուրաքանչյուր դիակի բուրբ մատից պիտակ էր կախված: Պիտակի վրա նշված էր անունը և տարիքը: Նրա բարեկամը, կռացած, նշտարով հմտորեն բացում էր դիակներից մեկի դեմքի մաշկը: Մաշկի տակ գեղեցիկ դեղին ճարպն էր:

*Նա* նայում էր այդ դիակին: Դա իրեն հարկավոր էր մի նովելի համար, այն նովելի, որտեղ գործողությունները կատարվում էին հինավուրց ժամանակներում: Դիերի հոտը, որ փտած նարինջ էր հիշեցնում, տհաճ էր: Բարեկամը մոայլ դեմքով շարունակում էր աշխատել նշտարով:

- Վերջերս դիակները քչացել են. - ասաց ընկերը:

Այդ պահին նրա գլխում, անկախ իրենից, ձևավորվեց պատասխանը. «Եթե ինձ դիակներ պետք